


«ԱՎԱՆԱՅ ԾՈՒԵՐ»

Posted on August 3, 2016 by Keghart


keghart.com

Category: [Opinions](#)



ՀՀ Նախագահի «ճառը»**✘ Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 2 Օգոստոս 2016*****Եթե Սփիւռքի «ղեկավարութիւնը» ողնահար ունի, քամակը պետք է շարժէ եւ ոչ թէ ՀՀ-ի այսօրուան իշխանութիւններու պոչիկը ըլլալով դիրքեր ապահովէ:***

Մինչեւ ինզինքս գտնեմ երկար ճամբորդութիւններէ եւ անպատմելի փորձութիւններէ անցնելէ ետք, պիտի փորձեմ ՀՀ Նախագահի «ճառ»ի կապակցութեամբ իմ վերլուծումներս եւ յառաջիկայ յօդուածաշարքիս ուրուագիծը յանձնել յարգելի ընթերցողներուն:



Ա.- Նախագահը կ'ըսէ. «ներհայաստանեան հասարակական և քաղաքական կեանքում անհրաժեշտ է արագացնել արմատական փոփոխութիւնների գործընթացը...»: Ո՞ր էիք Պրն. Նախագահ մինչեւ օրս: Պիտի սպասէիք որ նման դէպքե՞ր պատահէին, որպէսզի արագացնէիք «արմատական փոփոխութիւններու գործընթացը»: Քսան տարիէն անելի ա՛յս է ըսուածը: Հիմա՞ յայտնաբերեցիք փրկութեան բանալին:

ՀՀ Նախագահի «ճառը»**✘ Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 2 Օգոստոս 2016**

Եթե Սփիւռքի «ղեկավարութիւնը» ողնահար ունի, քամակը պէտք է շարժէ եւ ոչ թէ ՀՀ-ի այսօրուան իշխանութիւններու պոչիկը ըլլալով դիրքեր ապահովէ:

Մինչեւ ինզինքս գտնեմ երկար ճամբորդութիւններէ եւ անպատմելի փորձութիւններէ անցնելէ ետք, պիտի փորձեմ ՀՀ Նախագահի «ճառ»ի կապակցութեամբ իմ վերլուծումներս եւ յառաջիկայ յօդուածաշարքիս ուրուագիծը յանձնել յարգելի ընթերցողներուն:



Ա.- Նախագահը կ'ըսէ. «ներհայաստանեան հասարակական և քաղաքական կեանքում անհրաժեշտ է արագացնել արմատական փոփոխութիւնների գործընթացը...»: Ո՞ր էիք Պրն. Նախագահ մինչեւ օրս: Պիտի սպասէիք որ նման դէպքե՞ր պատահէին, որպէսզի արագացնէիք «արմատական փոփոխութիւններու գործընթացը»: Զսան տարիէն աւելի ա՛յս է ըսուածը: Հիմա՞ յայտնաբերեցիք փրկութեան բանալին:

Բ.- Հասկնալի պատճառներով այսօրուան իշխանութիւններուն ենթակայ եւ հլու հնազանդ ուժային կառոյցները ի՞նչ ըրին՝ քիչ մը զսպուածութեան կողքին դիմելով բիրտ ուժի: Պրն. Նախագահը առատօրէն կը շռայլէ իր գովասանքները այն ուժերուն հասցէին, որոնցմէ շատեր կօշիկ լզել տուած են...: Ամենէն մեծ թերութիւնը իր ելոյթին այն է, ԵՐԲ ՈՉ ՄԷԿ ԴՐԱԿԱՆ ԽՕՍԶ կ'ըսուի իսկական հայրենասէրներուն մասին, որոնք իրենց առաքելութիւնը գրեթէ կատարուած նկատելով, որոշեցին յանձնուիլ: Տեսնե՞ք ո՞վ պիտի ըլլայ իսկական վեհանձնը՝ նոր **իմպերատոր** թէ՞ «Սասնայ Ծռերը»: Կ'ապրինք ու կը տեսնենք թէ ի՞նչ օրեր կը սպասեն արդար բողոքի դուրս ելած - հոգ չէ թէ քիչ մը բիրտ: Հապա ընդվզումը ինպէ՞ս կ'ըլլայ, շաքար-աքլո՞ր բաժնելով:

Գ.- Այժմ պահն է որ սփիւռքն ու Հայաստանը ԱԶԱԼՐՐՋՕՐԷՆ հետեւին, որպէսզի այս տղոց քիթը չարիւնի եւ սխալ ու պարտադրուած խոստովանութիւններու տակ ստորագրել նետելու չստիպուին

(մեր նախկին եւ այժմու սպասարկութիւնները վարպետ են նման արարքներու մէջ): Եթէ Սփիւռքի «ղեկավարութիւնը» (բացառութիւնները յարգելի են) ողնահար ունի, քամակը պէտք է շարժէ եւ ոչ թէ ՀՀ-ի այսօրուան իշխանութիւններու պոչիկը ըլլալով դիրքեր ապահովէ:

Դ.- ՀՀ Նախագահին «ճառ»ին ընթացքին առաջին շարքերուն վրայ բազմաժ տեսանք հոգեւորականներ, խստադէմ խմբագիրներ, պետական այրեր, նոյնը չենք կրնար ըսել դէպքերու ընթացքին, ուր կը փայլէին իրենց ... բացակայութեամբ: Ա՞յս է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ եւ մտաւորականիութեան կոչումը:

(Շարունակելի)

